31.08.2016թ.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս Ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանի, մի կողմից, և Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (այսուհետ՝ Միություն), ի դեմս գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր, իսկ առանձին՝ Կողմ).

- ✓ *Կարևորելով Միության կողմից ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջոցով առաջարկվող նորարար ծրագրերը,*
- ✓ *Ընդգծելով Միության կողմից ձեռնարկվող ջանքերը՝ Հայաստանի բարձր տեխնոլոգիաների զարգացմանը խթանելու հարցում,*
- ✓ *Գնահատելով Միության կողմից իրականացվող աշխատանքները՝ կրթության որակի և զարգացման ուղղությամբ,*
- ✓ *Կարևորելով Ասոցիացիայի դերը իրավապաշտպան և հակակոռուպցիոն գործունեության ոլորտներում, իրավական, այդ թվում հակակոռուպցիոն կրթության ներդրման և զարգացման գործում, ինչպես նաև հանրության շրջանում իրավական իրազեկության և հակակոռուպցիոն ընկալման բարձրացմանն ուղղված աշխատանքները,*
- ✓ *Գնահատելով Ասոցիացիայի պատրաստակամությունը ինֆորմացիոն նորարար տեխնոլոգիաների միջոցով Հայաստանում իրավական և հակակոռուպցիոն մշակույթի ձևավորման, մարդու իրավունքների պաշտպանության և հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման հարցում,*
- ✓ *Անհրաժեշտ համարելով իրավապաշտպան և հակակոռուպցիոն գործունեության ոլորտներում զարգացնել ինֆորմացիոն և անվտանգության տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները,*

Կնքեցին սույն Համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի նպատակները

1.1. Կողմերը միավորում են ջանքերը հետևյալ նպատակներով՝

- Օժանդակել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների, այդ թվում անվտանգության համակարգերի, վեբ կայքերի ստեղծմանը և ներդրմանը,
- Նպաստել իրավական, այդ թվում հակակոռուպցիոն կրթության և հասարակության իրավական իրազեկման ոլորտում նորարար գաղափարների ներդրմանը՝ ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների, այդ թվում անվտանգության համակարգերի միջոցով,
- Նպաստել Հայաստանի նախադպրոցական, հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում իրավական և հակակոռուպցիոն կրթական նորարար գործիքների մշակմանն ու ներդրմանը:

2. Համագործակցության հիմնական սկզբունքները

2.1. Համաձայնագիրը սահմանում է Կողմերի միջև համագործակցության հետևյալ սկզբունքները.

- Կողմերի միջև համագործակցությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և Համաձայնագրի դրույթների վրա,
- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են օրինականության, իրավաբանական օգնության իրավունքի ապահովման, օրենքի առջև հավասարության, համաղեկավարման, համապատասխան պատասխանատվության, թափանցիկության և ժողովրդավարության սկզբունքներով:

3. Համագործակցության ուղղությունները

3.1. Կողմերը համաձայնվում են իրականացնել հետևյալ գործունեությունը.

- Համատեղ մշակել և Հայաստանում ներդնել մարդու իրավունքների պաշտպանության և կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ գործիքներ և կառուցակարգեր՝ օգտագործելով ժամանակակից ինֆորմացիոն և անվտանգության տեխնոլոգիաները,
- Միատեղել ջանքերը Հայաստանի նախադպրոցական, հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում իրավական և հակակոռուպցիոն բնույթի դասաժամերում նորարար տեխնոլոգիական գործիքների ներդրմանը,
- Համատեղ մշակել համակարգչային ինտերակտիվ խաղեր, ծրագրեր այլ հավելվածներ, որոնք նախատեսված կլինեն հեռախոսներով, պլանշետներով, համակարգիչներով, այլ տեղեկատվական համակարգերով օգտագործելու համար՝ իրավական կրթության և իրավական, այդ թվում հակակոռուպցիոն իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով,
- Քննարկել և մշակել երկկողմ հետաքրքրություններ ունեցող բարեփոխումների և հանրային քաղաքականությունների ռազմավարություններ, առաջարկներ, հետևել դրանց ընդունման գործընթացին,

- Համատեղ ուժերով վեր հանել բիզնես ոլորտում առկա խնդիրները և կոռուպցիոն ռիսկերը, ջանքեր գործադրել դրանց լուծման ուղղությամբ,
- Համակարգել աշխատանքները Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայում և այլ համատեղ հետաքրքրություններ ներկայացնող ձևաչափերում,
- Մշակել և իրականացնել համատեղ, այդ թվում դրամաշնորհային ծրագրեր, վերը նշված ուղղություններով:

3.1.1. Այլ դրույթներ

- Կազմակերպել աշխատանքային քննարկումներ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ Համաձայնագրով նախատեսված գործողությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով,
- Կողմերից որևէ մեկի առաջարկության դեպքում Կողմերի գրասենյակներում անցկացնել խորհրդակցություններ և քննարկումներ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Համաձայնագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:
4.2. Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Համաձայնագրի անբաժանելի մասը:
4.3. Համաձայնագիրը կազմված է երեք էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
4.4. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

Կարեն Զաքոյան
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ

Կ.Տ.

Կարեն Վարդանյան
Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն

Կ.Տ.